

ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԻԱԿ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-226-Ն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարի չափը՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

ՆԳ=ՄԳ×ՆՄ

ՆԳ- միակ բնակարանի իրացման նվազագույն գումարի չափն է,

ՄԳ- բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1մ² մակերեսի շուկայական միջինացված գինն է,

ՆՄ- բնակարանի նվազագույն մակերեսն է, որը հավասար է 40մ²:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն մինչև յուրաքանչյուր ամսվա հինգը Երևան համայնքի բոլոր վարչական շրջանների և յուրաքանչյուր մարզի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանի 1մ² մակերեսի առավելագույն շուկայական գին ունեցող համայնքների վերաբերյալ առկա տվյալների

թվաբանական միջինի հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը տրամադրում է ՄԳ-ի վերաբերյալ տեղեկատվություն:

4. Քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի բաժնեմասի իրացման դեպքում նվազագույն գումարի չափը հաշվարկվում է սույն որոշման 1-ին կետով սահմանված ՆԳ-ն բազմապատկելով քաղաքացի-պարտապանի ունեցած բաժնեմասով, որը չի կարող պակաս լինել քաղաքացի-պարտապանի 1/2 բաժնեմասի համար հաշվարկված նվազագույն գումարի չափից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը տրամադրում է տվյալ ամսվա համար սույն որոշման 2-րդ կետով սահմանված

տեղեկատվությունը: